ՅԱՐՇԱԿՈՒՆԻՔ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՉՅԱՆՆԵՐ

ՀՐԱՆՏ Ք. ԱԲՐԵՆ (ԱՄՆ)

1

Աստվածները մահկանացու են։ Առհասարակ կմեռնին հյուծախտն, երբ իրենց հավատացողները կհմայվին նոր դաղափարներով, կամ կյուրացնեն այնպիսի ընկերական տեսակետներ, որոնք պաշտված աստվածներու ենթադրյալ կարողությունները, կամ նույնիսկ գոյությունը, կասկածի կենթարկեն։

Մերձավոր Արևելքը թերևս միակ երկրամասն է, ուր ամենաշատ թվով աստվածներ մեռած են։ Մեռած կնշանակի լրված գիրենք պաշտողներու կողմե, որոնց նախահայրերը ատենոք, ըստ իրենց մտածելակերպի, ստեղծած կամ հնարած էին սույն աստվածները և գերմարդկային կարողություններով ալ օժտած, որպեսզի պաշտամունքի արժանի բլլան։

Երրորդ դարու վերջին քառորդին Հայաստան աշխարհն ալ տեսավ յուր բազմադարյան մեծ ու փոքր, ընիկ և եկվոր աստվածներու չքացումը։

Այս պարագային, բաղաքական տեսակետ, քան իմաստուններու կրոնափիլիսոփայական մտորում կամ ենթադրություն, պատճառ եղավ, որ Արամազդ, Անահիտ և Ընկերություն լրվին երեկի իրենց հավիտենականությունը գովերգող հայ երկրպագուներեն։

Տրդատ Գ-ն էր, որ քաղաքական նկատումով մահավճիռ կարձակեր հայ ժողովուրդի աստվածներուն դեմ և իր հաշվով, պետության վտանգված ապահովությունը փրկելու միջոց կհամարեր նոր կրոն մը՝ քրիստոնեություն ընդունիլ տալ իր հպատակներուն։

Քրիստոնեության Հայաստան մուտքը հայոց պատմության շրջադարձային մեկ դեպքն է, և որպես այդպիսին, հանդամանորեն պետք է ուսումնասիրվի և մեկնաբանվի։

Վկայաբանական սնոտի կամ հրաշապատում պաճուճանք, որով եկեղեցական պատմիչներ Տրդատի անձը պարուրած են, անճանաչելի դարձուցած է պետական գործիչը։ Սուրբերու կենսագիրներ շատ քիչ անգամ հավատի ատաղձ կրնան հայթայթել իրողություններ արձանագրել ուզող պատմագիրներու։ Երկուքին ճամփաները տարբեր ուղղությամբ կրնթանան։ Երբ կենսագրած անձը սրբացնել որոշած ես, հրաշապատում մանրամասնություններու պետք ունիս, հաճախ ինքնահնար։ Այդպես եղած է Տրդատի և Գրիգորի վերաբերմամբ։ Նմանօրինակ է նաև այդ երկուքին ժամանակակից Կոստանդիանոս կայսեր պարագային։ Քրիստոնյա Եվսեբիոս Կոստանդիանոսի մասին կպատմե բաներ, որ հեթանոս պատմիչ Զոսիմոսին ծանոթ չէ։ Խորենացին իսկ, թեև հավատիին սիրահար պատմագրող, բայց բլլալով ջերմեռանդ քրիստոնյա, Կոստանդիանոսի մասին հետևյալ դրածը հավատի կհամարե. «...եկեղեցու դեմ հալածանք սկսեց և շատերին նահատակեց, և այս հանդգնության պատճառով ինքն էլ ամբողջ մարմնով ապականվեց ելեփանդական բորոտությամբ։ Արիոդական կա-

խարդները և մարսիկյան բժիշկները չկարողացան բժշկել, ուստի Տրդատին խնդրեց Պարսկաստանից և Հնդկաստանից հմայողներ ուղարկել, բայց նրանք էլ օգուտ չբերին։ Այս ժամանակ մի բանի բրմեր, դևերից խրատվելով, հրամայեցին, որ բազմաթիվ փոքր երեխաներ մորթել տա ավազանի մեջ և նրանց տաք արյունի մեջ լողանա, որով կառողջանա։ [Կոստանդիանոսը] երբ լսեց երեխաների լացը, նրանց մայրերի ողբը, մարդասիրությամբ դթաց, նրանց փրկությունն ավելի լավ համարելով, քան իրենը։ Սրա փոխարեն նա ընդունում է աստծուց,— երազի մեջ առաքյալներից հրաման ստացավ, որ [բորոտությունից] կմաքրվի՝ կենսատու ավազանում լվացվելով Հռոմի Սեղբեստրոս եպիսկոպոսի ձեռքով, որ նրան հալածանքից փախել ապրում էր Սերապտիոն լեռնում։ Նրանից նա սովորեց և հավատաց. և աբեված բոլոր բռնավորներին նրա առաջ ոչնչացրեց, ինչպես համառոտ պատմում է քեզ Ագաթանգեղոսը»[1]։

Պաճուճանք, այո՛։ Հավատի պատմություն, ո՛չ։

Եվ Ագաթանգեղոս, կամ այդ անունով գրող անձ կամ անձեր, Տրդատեն 120 կամ ավելի տարիներ վերջ, պաճուճանքը ավելի պճնեցին։ Կոստանդիանոսի նման պարզ բորոտությամբ չգոհացան. հայ հեթանոս թագավորը ալ ավելի սարսափազդու պատկեր մը պետք է ներկայացներ։ Եվ ահա Տրդատ, «ելեալ ըստ մարդկային բնութիւնս արտաքս՝ ի նմանութիւն վայրենի խոզաց, իբրև զնոսա ընդ նոսա ի մէջ նոցա երթեալ բնակէր։ Եւ այնուհետև մտեալ յեղէգն խոտաճարակ լեալ անհնարին անզգայութեամբ, մերկ զանձն ընդ դաշտսն կոծելով»[2]։ Իսկ Հռոմի Սեղբեստրոս եպիսկոպոսի նման, հալածանքեն փախուստ տալով լեռներ ապաստանելու ալ հրաշապատում ոչինչ չուներ, ուստի Գրիգոր խոր վիրապ պիտի ձգվեր, ուր պիտի ապրեր տասներեք տարի օձերու հետ միասին։ Հայ եկեղեցվո շարականն ալ Ագաթանգեղոսի պատմածը պիտի վավերացներ. «Որ ի ձեռն մաղթանաց սրբոյն Գրիգորի ի մարդկային բնութիւն դարձուցեր յանասնեղէն ի բնութիւնէն նորաստեղծեալ զարքայն մեծ Տրդատ»։

2

Տրդատի այս հանդուգն բայլին դրդապատճառը որոնելնուս, պետք է հիսուն կամ վաթսուն տարի ետ երթանք և մեր ուշադրությունը կեդրոնացնենք դեպքի մը, որ Գ դարու խոշորագույն քաղաքական դեպքն էր Մերձավոր Արևելքի մեջ։ Այդ տեղի ունեցած էր Հայաստանեն դուրս և հայ ժողովուրդի հետ բնավ առնչություն չուներ, թեև հետագային զայն պիտի մխրճեր ճգնաժամե ճգնաժամ հարյուրավոր խռովահույզ տարիներ։

Այս դեպքն էր Արտաշիր Սասանյանի հաջող սպստամբությունը, որ կխորտակեր ավելի քան չորս հարյուր տարի տևած Պարթև Արշակունիներու հարստությունը և հիմք կդներ իր ընտանիքի տիրապետության։

Սասանյաններու իշխանության գլխավոր հատկանիշը եղավ մազդեզական կրոնի հրաբխային վերազարթնումը, որ նույնիսկ Աստուշիրի կողմե կհոչակվեր պետական քաղաքականություն։ Յուր «Կտակը», որդվույն Շապուհի և հաջորդներուն, կհանդիսանար այս քաղաքականության հիմնական սկզբունքը, որ Սասանյան թագավորներ համառորեն մշակեցին։ «Կտակը» կհրահանգեր.

---

1 Խորենացի, Հայոց պատմություն, Երևան. 1961, Բ, 24։
2 Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, § 212։

«Երբե՛ր մի մոռնար, որ, որպես թագավոր, դուն միաժամանակ պաշտպան ես թե կրոնին եւ թե բու երկրիդ։ Ատրուշանը և դահը անբաժանելի համարեա։ Այդ երկուքը միշտ զօրավիգ պետք է բլլան մեկդմեկու...»[3]։

Պարթև Արշակունիներու օրով Զրադաշտի հավատքը հետզհետե ուռճանցած էր, տեղը տալով կրոնի մը, որ խառնուրդ մ'էր, ինչպես արեւի և լուսնի պաշտամունք, մեռած թագավորներու կամ նույնիսկ նախահայրերու աստվածացում և այլն։ Կարդ մը բանասերներ Պարթև Արշակունիները նկատեցին որպես այլասերած հույներ, որ իրենց դրամներուն վրա հելլենասեր բառը կդրոշմեին և հելլենիստական գաղափարներե կհրապուրվեին։ Պարթև արքաներ թեև անտարբեր չէին զրադաշտականության հանդեպ, բայց տեսնցմե ոչ մին չուներ այն մոլեգին ավանդապաշտ նվիրումը ատոր հանդեպ, որ Սասանյաններու քաղաքական գինարանին ամենաազդու գները եղավ, որ, ըստ իրենց, արքայական նոր հարստության անխորտակելի հիմնաքարը պիտի հանդիսանար։ Շապուհ Բ-ի օրով Զենդ-Ավեստան վերջնական խմբագրություն ունեցավ։ Ահուրա-Մազդան (Բազմապարգև Ողի) հաղթանակի և փառքի նոր շրջան մը կսկսեր և իր ատրուշանին պատկերը Սասանյան թագավորներու դրամները կզարդարեր։

Կրոնական այս բորբորումը, սակայն, կրակատունեն արքունիք խուժելուն, պետության ներքին և արտաքին քաղաքականությունը արմատական փոփոխության պիտի ենթարկեր։ Հետաքրքրական է նկատել, թե Շապուհ Բ-ի օրով ի գործ դրվեցավ կրոնական հալածանք։ Երկյուղալի նորություն մը, որովհետև աննախընթաց էր։ Խիստ հատկանշական է, որ չորրորդ դարուն, Արևելքի և Արևմուտքի մեջ մարդոց մեծամասնության համար կրոնական խնդիրը կենսական հարց դարձավ, և յուրաքանչյուր կողմ նվիրական պարտականություն համարեց իր կրոնը տարածել, իսկ հալածել մյուսները։ Որով զրադաշտականությունն և քրիստոնեությունը իրարու դեմ ճակատեցան, և Շապուհ Բ նախահարձակն էր կրոնամոլական այդ պայքարի։

Միաժամանակ Սասանյաններ, հախուռն հավակնոտությամբ, ինքզինքնուն օրինավոր ժառանգը համարեցին Աքամենյան Պարսկաստանի, և Հռոմեական կայսրությունեն պահանջեցին իրենց հանձնել Փոքր Ասիոյ բոլոր հողերը։ Նույնինքն Արտաշիր նման պահանջ մը բրավ, երբ աննախընթաց պատվիրակություն մը (չորս հարյուր ընտրված բարձրահասակ երիտասարդներ) իր նամակը տարավ Հռոմեական կայսր Ալեքսանդր Սեվերոսի. «Արտաշիր, մեծ Արքան, հրամայեց հռոմեացիներուն և անոնց իշխանավորին անմիջապես հեռանալ Սյուրիայեն և Արևմտյան Ասիոյ մնացած վայրերեն, և ձգել, որ պարսիկները իրենց տիրապետությունը հաստատեն Հոնիայի, Քարիայի, և Եգեական ու Սև ծովերու միջև գտնվող երկիրներուն, որոնք Պարսկաստանի կպատկանին ժառանգական իրավունքով»[4]։

Նման հավակնությամբ գոտեպնդված կրոնա-ռազմական քաղաքականությունը, նոր Պարսկաստանը ահարկու սպառնալիք մը պիտի ըներ Մերձավոր Արևելքի ժողովուրդներուն, ի մասնավորի Հայաստանի, ուր Սասանյաններու մահացու թշնամի Արշակունի ընտանիքի մեկ հյուղը կիշխեր։

[3] J. Malcolm, History of Persia, London, 1815, էջ 115։
[4] Herodian, VI, 4.

Տրդատ և հաջորդական ինն Արշակունի թագավորներ դիտակցեցան Սասանյան վտանգի իրական բնույթին — հայ ժողովուրդի ձուլումը Պարսիկ պետության մեջ — և պայքարի գենքեր փնտրեցին, որ սուրեն և ագեկեն ավելի հզոր բլլար, կամ սուր ու ագեկ գործածող հայերու ոգին պոգպատեր։ Սույն տաս Արշակունի արքաներու ժամանակ տեղի ունեցած դար ու կես տևող հուսահատ պայքարի ընթացքին հնարամիտ հայ ժողովուրդի գտած երկու պաշտպանողական գենքերը իր պատմության հունը պիտի փոխեին բոլորովին տարբեր ուղղությամբ։

Այս տաս Արշակունիներու ժամանակաշրջանին հայ ժողովուրդի հոգեցունց ոգորումը Սասանյան Պարսկաստանի դեմ կցուլացնել դասական դյուցազներգության մը հուզիչ տարրերը, որ արժանի էր հանճարեղ հայ Հոմերոսի մը։ Մենք այնքան տարված ենք սույն պայքարի այս ու այն միջադեպերով, որ բոլորովին անտես շրած ենք, որ անտառը չենք տեսած։

Այս համապարփակ ոգորումին մեջ ի հայտ բերված և գործածված երկու նոր գենքերն էին՝ քրիստոնեություն և ապա՝ հայերեն այբուբեն։

Ես չեմ ըսեր թե՝ եթե Սասանյան սպառնալիքը չբլլար, հայերը թերևս քրիստոնյա չբլլային։ Այլ կըսեմ, թե հայ թագավոր մը Սասանյաններու դեմ պայքարելու և պաշտպանվելու զորավոր գենք համարեց Հռոմեական կայսրության մեջ տարածվող քրիստոնյա կրոնը և զայն իր արքայական հեղինակությամբ պարտադրեց հայ ժողովրդին։ Խորենացիի բառերով, «սաստելով և համոզելով մեծամեծ նախարարներին, այլև ռամիկ մարդկանց ամբողջ բազմությունը իրապես Քրիստոսի (հավատացյալ) լինելու, որպեսզի նրանց գործերը համապատասխանեն նրանց հավատին»[5]։ Հայ մեծ ավատապետներ, հպարտ, կամակոր, երբեմն կռվազան, այս մեկ պարագային, հակամայս, համաձայնեցան արքային հետ, որովհետև նոր Պարսկաստան կսպառնար նաև իրենց շահերուն և ապահովության։

Մազդեզական նորազարթ կրոնով ոգևորված պարսիկներուն հակադրել նոր կրոնով մը ոգևորված հայ ժողովուրդ՝ ահա Տրդատի նպատակը։ Եթե հարց տրվի՝ թե ինչո՞ւ չխանդավառվիլ Արամազդ-Անահիտով։ Որովհետև Տրդատի գահ բարձրանալուն հայոց հին աստվածները շատ տխուր օրերու մնացեր էին, և ատոր ալ պատճառը Սասանյան թագավորն էր։

Շապուհ Ա գրավեց Հայաստանը և իր որդին՝ Որմիզդ-Արտաշիրը հայոց թագավոր գրավ, որուն իշխանության տակ մնաց Հայաստանը 27 տարի։ Որմիզդ-Արտաշիր կործանել տվավ հայ աստվածներու արձանները և մազդեզական ատրուշան հաստատեց։ (Խորենացին այս Արտաշիրին ըրածը կվերագրե Սասանյան հարստության հիմնադիր Արտաշիրին)։ «Հրամայում է անշեջ պահել Որմզդական հուրը Բագավանի բագինի վրա։ Բայց այն արձանները, որ Վաղարշակ շինել տվեց իր նախնիքներն պատկերներով, ինչպես և արեգակի և լուսնի պատկերներն Արմավիրում, որոնք Արմավիրից փոխադրվեցին Բագարան և նորից Արտաշատ՝ Արտաշիրը հրամայում է փշրել»[6]։ Որով հայ նոր սերունդ մը կար, որու օրով հայոց աստվածները, եթե բոլորովին լքյալ

5 Խորենացի, Բ, ղբ։
6 Խորենացի, Բ, հվ։

գույրի չէին վերածված, սակայն շատ բան կորսնցուցած էին իրենց փառքին, հմայքին և հեղինակութենեն։

Տրդատ Հռոմեական կայսրության մեջ ապրած էր երկար տարիներ։ Ուշիմ երիտասարդ, ան ծանոթացած ըլլալու էր քրիստոնյա կրոնին և զայն պաշտողներուն։ Այդ ատեն Փոքր Ասիան խառնարան էր զանազան կրոններու։ Հավանարար քրիստոնյաները ամենեն ավելի ազդած ըլլալու էին թագավորաղուն երիտասարդին իրենց եռանդով և համառ նվիրումով։

Համենայն դեպս, Տրդատ ի սկզբան ջանաց Անահիտի պաշտամունքը վերարծարծել՝ հայերը համախմբելով իրենց երբեմնի սիրելի աստվածուհիին շուրջ։ Բայց փորձը անհաջող անցավ և չստեղծեց այն ջերմեռանդ խանդավառությունը, որ Պարսկաստանի մեջ նոր մազդեզականություն հառաջ բերած էր։

3

Երբ որոշեց քրիստոնեություն Հայաստանի պաշտոնական կրոնը հռչակել, Տրդատ պետք ուներ եկեղեցական պաշտոնյաներու։ Ինք երկար ատեն Արևմուտք ապրած ըլլալուն նախապատվություն տվավ այդ կողմի եկեղեցականներուն, փոխանակ ասորի կրոնականներու, որ մեծամասնաբար Եդեսիո քրիստոնեական կեդրոնեն եկած էին Հայաստան միսիոնարական աշխատանք կատարելու, իսկ երկրի մեջ ալ քրիստոնյա խմբեր կային, որոնք կորիզը կամ թթխմորը պիտի կազմեին արքային հրամանով հաստատվող եկեղեցիին։

Հայաստանի ամենամոտ քրիստոնեական կեդրոն արևմուտքում Կեսարիան էր։ Տրդատ հայրենիք վերադառնալուն հոն գտնված էր, ուր իրեն ընդառաջ եկած էին հայ նախարարներեն շատերը[7]։ Ահա այս քաղաքեն բերել պիտի տար եկեղեցականներու խումբ մը, որուն պետն էր Պարթևազգի Գրիգոր։

Հեթանոս Հայաստանի մեջ քրմապետը պետական կամ քաղաքական մարդին մեջ գործոն դեր մը ունե՞ր։ Չենք գիտեր։ Մեր ունեցած աղբյուրները ցուցմունք մը չունին, որով կարելի է ենթադրել, թե քրմական դասու գործունեությունը բազմաթիվ աստվածներու պաշտամունքի ծիսակատարության, կարգ ու սարքի հսկողության և մեհենական տոմարներու ընթացիկ պահպանման մեջ կկայանար։ Քրմապետ մը իրավասություն չէր կրնար ունենալ թագավորի և արքունիքի պետական գործերուն միջամտել կամ ուղղություն տալ։

Երբ Գրիգոր Հայաստանի նոր կրոնին հովվապետը կրլլար, քրիստոնյա եկեղեցին Հռոմեական կայսրության մեջ դեռ կես մը հալածական վիճակ ուներ և անոր մեծ ու փոքր պաշտոնյաներուն միակ մտահոգությունն էր եկեղեցվո նավը ընկղմելե զերծ պահել։ Աղանդաբանական վեճերը միայն իրենց մտամարզանը կհայթայթեին և իրենց արյան ճնշումը ոստոստուն կպահեին։ Կայսեր և անոր պաշտոնյաներուն հետ չափվիլ մտքե չէր անցներ. բացի, մարտիրոսանալու տենչեն մղված, այս կամ այն կառավարիչը կդրդռեին, որպեսզի իրենց արյունով եկեղեցվո ծառը ուռճանա, ինչպես կհավատային։ Երրորդ դարու վերջին քրիստոնյա եկեղեցին պաշտպանողական և տեղ-տեղ ալ հալածական դիրքի մեջ կգտնվեր։

Բայց ահա երկրի մը թագավորը իր և իր նախահայրերուն հնադարյան աստվածներու մեհյանները կործանել կուտար կամ քրիստոնեական տաճարի

7 Խորենացի. Բ, ձբ։

կվերածեր, բուրմերը կհալածեր, և իր հպատակներուն կհայտարարեր, թե «Ձեր պաշտած Արամազդ, Անահիտ, և մյուսները կեղծուպատիր ոչնչություններ են։ Ճշմարիտ կրոնը Նազովրեցի Հիսուսի կրոնն է, որը իրապես պիտի փրկի մեզ սմենքս»։

Ուշադրավ երևույթ է, որ քրիստոնեությունը Հռոմեական կայսրության մեջ ժողովուրդի վարի խավերեն սկսած դանդաղորեն վերջապես պիտի հասներ արքունիք, մինչ Հայաստանի մեջ արքունիքեն սկսելուն վայրէջքը ավելի արագ պիտի ըլլար։

Տրդատի ձեռնարկը ապշեցուցիչ և աննախընթաց դեպք մ'էր։ Ամբողջ Հռոմեական կայսրության մեջ հալածական, նախատված և պետության համար վնասակար հռչակված կրոնի մը տեր կանգնիլ և ոչ միայն ատոր սոսկական ջատագովի դերով կոհանալ, այլ յուր երկրի հնադարյան աստվածներու մեհյանները խորտակելով վերջ տալ անոնց պաշտամունքին և պարտադրել նոր կրոն մը յուր հպատակներուն, անհավատալի և եզական դեպք մ'էր այդ ատեն։ Գրավական մը Տրդատի հզոր անհատականության, որ նման արմատական վիթխարի ձեռնարկի մը միջամուխ կըլլար, Պարսկաստանի իրական սպառնալիքին առջև թոմբ կանգնելու առաջադրությամբ։

Հ. Մանանդյան չընդունիր Տրդատի նախաձեռնարկողի հանդամանքը. և կգրե թե 313 թվականին, Կոստանդիանոսի և Լիկինիոսի Միլան քաղաքի մեջ հայտնի հրովարտակին հրապարակումեն վերջ, հայ թագավորը քրիստոնեությունը կհռչակե որպես պաշտոնական կրոն իր երկրի։ Հայաստանն ալ Տրդատ Ա-ի ժամանակ, ըստ Մանանդյանի, «սերտ կերպով միացված էր Հռոմեական կայսրության, ուստի շնորհիվ հենց այդ կապի քրիստոնեությունը հաստատվել էր որպես պաշտոնական կրոն նաև Հայաստանում»[8]։

Մանանդյանի այս եզրակացությունը կհամարենք սխալ։

Միլանի հրովարտակ ըսվածը հրամանագիր մ'էր, որուն իսկական օրինակը կորսված է։ Բայց Լակտանտիոս սույն հրամանագրի Նիկոմեդիո կառավարչին ղրկված օրինակին լատիներենը կուտա իր մեկ գրքին մեջ, որուն հունարեն թարգմանությունը կա Եվսեբիոսի մոտ։ Անկասկած այս հրամանագիրը ղրկված էր բոլոր կառավարիչներուն, նկատի ունենալով, որ քրիստոնյաներ կգտնվեին կայսրության գրեթե բոլոր նահանգներուն մեջ։

Հրամանագիրը քրիստոնեությունը պետական կրոն չէր հռչակեր, այլ պարզապես քրիստոնյաներու պաշտամունքի ազատություն կտրվեր, ի շարս ուրիշ կրոններուն։ Տանը մաս մը այդ հրամանագրեն. «...Հետ այսու ամէն անձ, որ կփափաքի կատարել քրիստոնէական պաշտամունք կրնա ազատորեն և անպայմանն ընել այդ առանց արգելքի կամ նեղության։ Այս բաները հարմար դատեցինք լիովին հայտնել Ձեր ուշադրամտության, որ գիտնաք, թե մենք ազատորեն և առանց վերապահության սույն քրիստոնյաներուն ազատություն տված ենք իրենց հավատքը պաշտելու։ Եվ երբ դուք վերահասու ըլլաք, թե մենք այս շնորհքը ըրած ենք քրիստոնյաներուն, Ձեր սիրելությունը կհասկնա, թե ուրիշներուն ալ ազատություն կտրվի իրենց հավատքը պաշտելու, ինչպես այդ

8 Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 126—127։

կապաշտական մեր ժամանակի անդորրութեան, որ ամեն մարդ լինի ազատ իր ընտրած կրոնը պաշտելու...»[9]։

Ինչպես կտեսնվի, Միլանի հրովարտակը քրիստոնեությունը պետական կրոն չէր հռչակած։ Անոր համար 70 տարի եւս անցնելու էր։ Ոչ ալ այդ հրամանագրով Կոստանդիանոս ինք քրիստոնյա կըլլար։ Ան մահվան անկողնի մեջ պիտի մկրտվեր 24 տարի վերջ։

Եթե, ըստ Մանանդյանի, Տրդատի օրով Հայաստան ենթակա կերպով միացված էր Հռոմեական կայսրության, այդ պարագային տրամաբանական է ենթադրել, թե կառավարիչներուն ղրկված վերոհիշյալ հրամանագրեն օրինակ մ՚ալ ղրկված էր Տրդատին, որպեսզի ան ալ քրիստոնեությունը թույլատրե, ինչպես նաեւ ուրիշ կրոնները։ Տրդատ այդ տեսակ բան չըներ։ Ընդհակառակը, քրիստոնեությունը պետական կրոն կհռչակե, ինք առաջին նորադարձ քրիստոնյաներեն կըլլա, եւ ինչ որ ամենեն հատկանշականն է եւ բոլորովին հակառակ Միլանի հրովարտակին տրամադրության եւ ոգիին, ան կկործանե Հայաստանի մեջ հազար կամ ավելի տարիե ի վեր պաշտվող կրոնը եւ անոր մեհյանները։

4

Հավանաբար Տրդատ հաշվի չէր առած պարագա մը։ Սասանյաններ Պարսկաստանի հին կրոնի կրակը վերստին կբոցավառեին, որուն հնադարյան ավանդությունը ծանոթ եւ սիրելի էր պարսիկ ժողովուրդին եւ կրնար դյուրությամբ ոգեորել զանոնք։ Մինչդեռ Տրդատ բոլորովին նոր, չի փորձված, կասկածելի եւ հայ ժողովուրդի անծանոթ կրոնի մը լուծը կհարկադրեր իր հպատակներուն։ Ընդդիմադիրներ եւ անտարբերներ պիտի գտնվեին, ոչ միայն քրմական դասեն, այլ նաեւ ավատապետներեն եւ ժողովուրդեն, ինչպես կվկայե Խորենացին[10]։

Տրդատ, սակայն, արհամարհելով որեւէ ընդդիմություն, շարունակեց իր արմատական միջոցառումները նոր կրոնը տարածելու հայ աշխարհի մեջ։ Արքայի առատաձեռնությունը նորահաստատ եկեղեցին պիտի հարստացներ մշակելի հողերու բաշխումով եւ բագիններու կալվածներու փոխանցումով։ Հարստությունը զորություն կսնուցանե եւ հեղինակություն կամրապնդե։ Գրիգորի ընտանիքին քանի մը կաթողիկոսները գիտցան շահագործել այդ զորությունը, այն աստիճան, որ հոգեւորական գործունեութենեն ալ անդին անցած, քաղաքական ասպարեզի ավելի ազդեցիկ գործիչներ պիտի ըլլային, քան մեծ նախարարներեն շատեր։

Գրիգորի ընտանիքը, որ վեց կաթողիկոս տվավ, կրոնի ընտանիք մը հայտնվեցավ, որ հակառակ Գրիգորի հայ չըլլալուն, իրեն հաջորդները, ավատապետական այդ շրջանին, հանձին կաթողիկոսի, հայ եկեղեցին պիտի դարձնեին ամենամեծ ավատապետը երկրին, շատ ավելի հեղինակավոր եւ հզոր քան որեւէ ավատական իշխան եւ նախարար։ Այս վերջինը հոգ չէ, թե որքան ազդեցիկ, իր գավառի սահմաններեն անդին չէր կրնար տարածել իր իշխանությունը, մինչդեռ կաթողիկոսը, եպիսկոպոսական թեմերու ցանցով, համահայաստանյան հեղինակություն մը պիտի ունենար թագավորեն վերջ։ Թեեւ Քրիս-

[9] Lactantius, De Mortibus Persecutorum, XLVIII; Eusebius, Eccl. Hist. X.V. 2-14.

[10] Խորենացի, Բ, ղբ։

տոսի սպասավոր, սակայն անոնցմե մեկ քանին արքայի հետ չափվելու չատամսեցան։ Այդ պատճառով, գահի և աթոռի փոխհարաբերությունը չորրորդ դարուն և հինգերորդի առաջին քառորդին հետաքրքրական փուլերե կանցնի. արժանի պատմաբանի լուրջ ուշադրության։ Քրիստոնեությունը որպես կրոն ընդունած ոչ մեկ ուրիշ երկրի մեջ նորահաստատ եկեղեցին այդքան քիչ ատենին — հազիվ հիսուն տարի — տիրացավ այն հզոր հեղինակության, ինչ որ Հայաստանի մեջ եղավ։ Եվ այս առավելապես այն պատճառով, որ Տրդատ և իրեն հաջորդող Արշակունի թագավորներ քրիստոնյա կրոնը ազդու զենք մը համարեցին Սասանյան բռնակալության դեմ մաքառելու, մանավանդ երբ Տրդատեն վերջ Բյուզանդական կայսրությունն ալ քրիստոնեությունը ընդունեց։ Կրոնակցական կապը ստիպեց հայ արքան, իսկ թագավորության վախճանին, հայ կաթողիկոսը, Արևմուտքեն հուսալու օգնություն և պաշտպանություն։ Սասանյաններու մնայուն սպառնալիքը կարծես հայ թագավորին արգիլեց կաթողիկոսի հեղինակության հարաճուն ծավալումը սահմանափակել, ի մասնավորի երբ այս վերջինը քաղաքական ասպարեզ ալ կմտներ պետական գործերուն խառնվելու, որով հայրապետության աթոռը գրավող անձը եթե կորովի անհատականությամբ օժտված մեկը ըլլար, ինչպես եղան Գրիգորի ընտանիքեն կաթողիկոսները, թագավորը մրցակից մը կունենար։ Տիրան, Արշակ և Պապ թագավորներ ունեցան այդ դառն փորձությունը։ Տիրան սպաննել տվավ Հուսիկ կաթողիկոսը, ինչպես անկե առաջ ալ Արիստակես կաթողիկոս սպանված էր հայ իշխանի մը կողմե՝ Չորրորդ Հայքի վերակացու Արքեղայոս իշխան. Սակայն Արշակ և Պապ չի հետևեցան Տիրանի օրինակին։ Թերևս չի համարձակեցան, երբ իրենց դեմ գտան Ներսեսը, որուն երակներուն մեջ Արշակունի արյուն կար, որ Արշակի զարմիկն էր, և որը ահագին ժողովրդականություն կվայելեր։

Վրթանեսով կսկսի կաթողիկոսի ոչ միայն հոգևորական իշխանության ամրապնդումը, այլև պետական գործերու միջամուխ ըլլալը։ Հավանաբար Տրդատի հաջորդ Խոսրով Կոտակի թույլ անհատականությունը քաջալերած ըլլալու էր Գրիգորի այս փառասեր որդին, որ իր հեղինակությունը տարածելու մարմաշեն տարված իր 15 տարեկան զավակը՝ Գրիգորիս, եպիսկոպոս ձեռնադրեց և վրաց ու աղվաններու հայրապետ կարգեց, ուր պատանին պիտի սպանվեր չարչարալի մահով։ Իսկ մյուս զավակը՝ մանկահասակ Հուսիկը, ամուսնացուց թագավորի դստեր հետ։ Արքայական ընտանիքի հետ խնամությունը, հարկ կա՞ ըսելու, թե որքան պիտի բարձրացներ և զորացներ կաթողիկոսի դիրքը։

Վրթանես իրեն գործակից ընտրեց հայ նախարարներեն Վաչե Մամիկոնյանը։ Այս երկու ընտանիքներու գործակցությունը շարունակեց երկու սերունդ ևս։ Ներսես և Մուշեղ Մամիկոնյան, իսկ վերջին կաթողիկոսը՝ Սահակ, իր միակ զավակը, աղջիկ մը, կնության տվավ Համազասպ Մամիկոնյանին։

Գրիգորյան կաթողիկոսներու և Մամիկոնյաններու գործակցությունը հասկանալի է և առեղծվածային բան մը չունի։ Երկուքն ալ Արշակունի թագավորի շնորհընկալներն էին, որոնք կպարտեին իրենց բարձր դիրքը և հարստությունը։ Իրարու գործակցելով կպաշտպանեին իրենց շահերը։ Ուստի զարմանալու չէ, որ եկեղեցական պատմիչներ մասնավոր գուրգուրանքով մոտեցան Մամիկոնյան ընտանիքին։

Խոսրով Թագավոր որքան Վրթանեսի ազդեցության ենթակա եղած ըլլալու էր, որ երբ երկու իրարու դեմ կռվող նախարարական տուներ, Մանավազյան և Որդունի, Թագավորի հրամանով բնաջինջ եղան Վաչեի ձեռքով, անոնց ընդարձակ կալվածները, փոխանակ հարքունիս գրավելու, տրվեցան եկեղեցիին։

5

Սակայն Ներսեսն է, որ ամուր կազմակերպությամբ օժտեց եկեղեցին և Կաթողիկոսը արքունիքի մեծամեծներեն մին դարձուց։ Հոգևորական իշխանը միաժամանակ աշխարհական իշխան ալ եղավ։ Կաթողիկոսի քաղաքական գործունեությունը Ներսեսով իր ներկոր սկիզբը կունենա։

Ներսես Արշակ Թագավորի զարմիկն էր։ Իր մայրը, ինչպես նաև մեծ մայրը, Արշակունի իշխանուհիներ եղած էին։ Ան իր ուսումը ստացած էր Կեսարիա։ Ապա գացած էր Պոլիս և, որպես Արշակունի իշխան, ամուսնացած էր հույն Ասպիոն իշխանի աղջկան հետ։ Երբ կիմանար իր զարմիկին գահ բարձրանալը, կվերադառնար Հայաստան և նոր Թագավորի սենեկապետի պաշտոնը կստանար։ Բայց քիչ հետո, կաթողիկոսական Թափուր աթոռին կնշանակվեր Թագավորի կողմե։ Բարձր ուսմունքի տիրացած, ավելի քան որևէ նախորդ Գրիգորյան, միաժամանակ գիտակից իր իշխանական դիրքին, կազմակերպչական տենդագին աշխատանքի լծվեցավ։ Եկեղեցական բարեկարգություն, բարեսիրական հաստատություններ, դպրոցներ, և այդ ատենվա համար նորություն՝ վանքեր հիմնեց։ Այս ձեռնարկներուն զուգընթաց ստանձնեց պետական գործեր․ եղավ Արշակի դեսպանը Բյուզանդիոնի կայսեր քանի մը անգամ։ Շապուհ Բ կատաղի Սասանյանի սադրանքով և խոստումներով Արշակի դեմ դիրք բռնող նախարարները համոզելու և հաշտեցնելու աշխատանք տարավ իզուր։

Իր հիմնած վանքերը և մյուս հաստատությունները ծախսի կկարոտեին կանգուն մնալու։ Ներսես ճարը կգտներ։ Օրինակ, տնօրինեց, որ վանքի սուրբ հողին կրնան Թաղվիլ Թագավոր, իշխան և բարձրաստիճան պաշտոնյա։ Իհարկե, նման պատվի արժանացող մեկը դրամական կամ հողային նվեր կուտար վանքին, իսկ մահացողին ժառանգորդներն ալ պարբերաբար նվերներ տալ չէին մոռնար այն հաստատության, ուր իրենց հոր կամ պապուն գերեզմանը կգտնվեր։

Ներսեսի օրով հայ եկեղեցին ամենախոշոր հողատերը կըլլար Հայաստանի. այն աստիճան, որ դժգոհություն պիտի առաջացներ։ Հայր Մարդպետ, Արշակունի կալվածներու վերատեսուչը, նույնիսկ Ներսեսի երեսին կշտամբական կծու քննադատություն կըներ հայ աշխարհի արժեքավոր հողերուն «կանանցահանդերձ» հոգևորականներու տրվելուն համար։

Արշակ և Ներսես, երկու հզորակամ անձեր, ի վերջո բախում պիտի ունենային։ Ներսես, կրթնած իր ձեռք բերած հսկա հեղինակության, հոգևոր փրկության մշակի իր իրավասության սահմանին մեջ կհամարեր Արշակի արարքները քննադատել, նույնիսկ դատապարտել։ Գնելի մահապատիժը, Արշակի ամուսնությունը Փառանձեմին, Արշակավան քաղաքի կառուցումը և այլն, առիթ կուտային բուռն բախումներու երկու զարմիկներու միջև։ Արշակավանի պարագային Ներսես դժգոհ նախարարներու կողմը բռնեց։ Սա հասկանալի էր։ Արշակավան կվտանգեր նախարարներու շահերը, որովհետև իրենց հողերուն վրա աշխատող շինականներ, ճորտեր, սպասավորներ պիտի

խուժին թագավորի նոր քաղաքը, օգտվելու կարգ մը առանձնաշնորհներեն, որ Արշակ խոստացած էր հոն հաստատվողներու։ Նախարարը ավատապետ էր, եկեղեցին խոշորագույն ավատապետը, արքային վերջ։

Արշակի ամուսնությունը Փառանձեմին հետ Ներսես դատապարտեց որպես մեղանչում իր հաստատած մեկ կանոնին։ Արշակ Ներսեսի քննադատությունը համարեց ոտնձգություն յուր արքայական իրավասության։ Ներսես սպառնաց հրաժարիլ և հրաժարեցավ։ Արշակ թեև հաճոյակատար մեկը կաթողիկոս նշանակեց, բայց երկար չտևեց։ Ան Ներսեսի ոտքը դնաց, որ վերստին ստանձնեն կաթողիկոսությունը։ Սա ցույց կուտար Ներսեսի հեղինակավոր դիրքը։

6

Գրիգորի ընտանիքի վերջին կաթողիկոս Սահակի օրով գահի և աթոռի փոխհարաբերությունը կմանե վերջնական փուլին քաղաքական բախտորոշ դեպքի մը պատճառավ։ 387 թ. Բյուզանդիոն և Պարսկաստան Հայ աշխարհը կրաժնեն իրենց մեջ։ Սասանյաններ կստանան տոյուծի բաժինը, Հայաստանի գրեթե չորս-հինգերորդ մասը։ Հայ Արշակունի թագավորը այլևս թագակիր գործակատարը կըլլար Տիզբոնի արքունիքին, և հույժ անվստահելի գործակատար, երբ նկատի ունենաս Սասանյան և Արշակունի թշնամությունը։

Արշակունիներու և Գրիգորի ընտանիքի կաթողիկոսներու փոխհարաբերությունը երեք շրջան կունենա։ Նախ, Գրիգոր և Վրթանես գործակից են թագավորական տան։ Ապա Հուսիկ և Ներսես՝ Տիրանի, Արշակի և Պապի դեմ կմաքառին իրենց ծավալուն իրավասությունները արքունի կաշկանդումեն ղերծ պահելու։ Իսկ վերջին շրջանին, հայ աշխարհի մեծագույն մասին պարսիկ տիրապետության ենթարկվելե վերջ, վտանգված Արշակունի գահը փրկելու համար Սահակ պաշտպան կկանգնի վերջին Արշակունի թագավորին, նույնիսկ ի գին իր աթոռն ալ վրա տալու։

Սահակ պետական մեծ գործիչ մը եղավ։ Հայ եկեղեցվո քաղաքական գործունեությունը, իրմով ալ ավելի ամրապնդված, պիտի շարունակեր ընդ երկար։

Հայաստանի բաժանումեն վերջ, Սասանյան բռնապետության առաջին հարվածը պիտի իյնար եկեղեցիին։ Մինչև այդ, հայ եկեղեցվո գործածած գրքերը հունարեն լեզվով էին։ Այդ լեզուն չգիտցողներուն համար հայերեն թարգմանություն կըլլար բերանացի։ Այդպես շարունակած էր գրեթե հարյուր տարի։ Պարսիկ արքունիքը արգիլեց հունարեն գրքերու գործածությունը, այն համոզմամբ, որ թշնամի Բյուզանդական կայսրության հետ հայոց գործակցությունը վերջ կգտնե։

Հաչս հայ եկեղեցվո, ոգնաժամային հարված մ՚էր եղածը։

Պետք չէ մոռցվի կարևոր իրողություն մը։ Բաղդադամբ հեթանոսական կրոնին, քրիստոնյա եկեղեցիին գիրք մը ուներ, աստվածաշունչ, որ իր բազմազան հետաքրքիր պարունակությամբ, այդ ատենվա մարդոց աչքին մասնավոր հրապույր մը կներկայացներ։ Արամազդ և Անահիտ գիրք մը չունեին, որ իրենց հավատացյալներուն հայթայթեր այնքան շատ ուսանելի բաներ, ինչքան աստվածաշունչ։

Պարսիկ թագավորին հրամանը հայ եկեղեցին կգրկեր իր հիմնաբար գրքին։ Փրկության միջո՞ց։ Գիրքը պետք է հայերեն լեզվով ըլլար։ Ինչպե՞ս։ Հայ այբուբենով։

Գահի և աթոռի խառնվահույլ դիմադրությունը Սասանյան սպառնալիքին կվերջանար գահի կորստով։ Բայց նախավերջին գահակալը պիտի տեսներ նոր զենքի մը դարբնվիլը հայոց կողմե. ամենահզոր զենքը, որ տագնապահար ժողովուրդ մը կրնար ունենալ իր ինքնությունը պահպանելու դարերու աղդակործան մրրիկներուն դեմ։ Անմաշելի փրկարար զենք — հայ տառերու ադամանդ շարքը հավերժության դրոշմը վրան։

Այս վերջին պարագան իր խորհրդածության նյութ դարձնելուն, պատմաբան մը, որ փիլիսոփայական վարկյաններ կհյուրասիրե, եթե փորձե եզրակացնել, թե հայ ժողովուրդը գտած ըլլալու է անիմանալի գաղտնիքը զինք շրջապատող արհավիրքի քաոսեն դուրս գալու արև մը շոյակած, այսպիսի եզրակացության հետ տողերս շարողը ընավ վեճ չունի։

АРШАКИДЫ И КАТОЛИКОСАТ

ГРАНТ К. АРМЕН (США)

(Резюме)

В статье рассматривается проблема взаимоотношений армянских царей из династии Аршакидов и современных им католикосов из рода Григора Просветителя со времени принятия армянами христианства в конце III в. до падения Аршакидского армянского царства. В частности, говорится о сопротивлении армянских светских и духовных властей сасанидской экспансии, а также о политической деятельности армянской церкви в изучаемый период.